



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Երրորդ բաժանմունք

Որոշում

Միշա Հարությունյանի կողմից
ընդդեմ Հայաստանի ներկայացված
թիվ 36549/03 գանգատի

Մասնակի ընդունելիության վերաբերյալ¹

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք), իր՝ 2005 թ. հունիսի 5-ի նիստի ընթացքում, Պալատի հետևյալ կազմով.

Պրն. Բ.Մ. Ջուլյանչիչ, *Նախագահ*

Պրն. Յ. Հեդիգամ,

Պրն.Լ. Կաֆլիչ,

Պրն. Ս. Բերսան,

Պրն. Վ. Ջագրեբելսկի,

Տկն. Ա. Գյուլունյան,

Օրդ. Ռ. Յագեր, *դատավորներ*

և Պրն. Վ. Բերժե, *Բաժանմունքի քարտուղար,*

Քննության առնելով 2003 թ. հոկտեմբերի 29-ին ներկայացված վերոհիշյալ գանգատը՝ որոշեց հետևյալը.

¹ Սույն որոշման թարգմանությունը ոչ պաշտոնական է և կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով: Իրավական ուղեցույցը, Ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցության և կատարած ներդրումների համար, ցանկանում է երախտիքի խոսք ասել սույն հաշվետվության թարգմանիչ, Իրավական ուղեցույցի իրավական հարցերով փորձնակ Լուսինե Հակոբյանին ([Այստեղ տեղադրված են տեղեկություններ Լուսինե Հակոբյանի և Իրավական ուղեցույցի իրավական հարցերով այլ փորձնակների մասին](#)):

Մասնագիտական խմբագիր՝ «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության անդամ Արման Ալոյան:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Գործի Փաստերը

Դիմումատուն՝ պրն. Միշա Չարությունյանը, Չայաստանի քաղաքացի է՝ ծնված 1980 թ. և ապրում է Երևանում: Դատարանում նրան ներկայացնում է պրն. Յ. Ալունյանը, որը փաստաբան է և աշխատում է Երևանում:

Ա. Գործի հանգամանքները

Գործի հանգամանքները, այնպես ինչպես դրանք ներկայացրել է դիմումատուն, կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Գործի փաստերի նկարագիրը

1998 թ. հունիսի 25-ին դիմումատուն գորակոչվել է բանակ և կցվել Ադրբեջանին սահմանակից թիվ 33651 զորամասին:

1998 թ. դեկտեմբերի 3-ին դիմումատուն, հինգ այլ զինծառայողների հետ միասին, հերթապահության է նշանակվել թիվ 24 դիրքում:

1998 թ. դեկտեմբերի 4-ին վեց հերթապահներից մեկին՝ զինծառայող Յ-ին հայտնաբերել են մոտակա խրամատներից մեկում՝ մահացած ինքնաձիգի կատարված կրակոցից: Սպանության ժամանակ մնացյալ հինգ հերթապահներից միայն երեքն են գտնվել թիվ 24 դիրքի տարածքում՝ դիմումատուն և զինծառայողներ Տ-ն և Ա-ն: Վերջին երկուսը, ըստ երևույթին, միասին են եղել, դիրքից ոչ հեռու փայտ կոտրելիս: Պարզվում է, որ դիմումատունին այդ օրը, ավելի վաղ, տեսել են Յ-ի հետ վիճելիս:

2. Դիմումատուի և զինծառայողներ Տ-ի և Ա-ի ձերբակալումը և նրանց հանդեպ կիրառված բռնությունը

1999 թ. մարտի 4-ին և 5-ին դիմումատուն և զինծառայողներ Տ-ն և Ա-ն բերման են ենթարկվել զինվորական ոստիկանություն: Ոստիկանության ծառայողները ծեծի են ենթարկել նրանց՝ ստիպելով խոստովանել Յ-ի սպանությունը: Ըստ դիմումատուի՝ նրանք հայտնել են ոստիկանության ծառայողներին, որ Յ-ի վրա վստահաբար կրակել են սահմանի մյուս կողմից, ինչին ոստիկանները պատասխանել են, որ արդեն հաստատվել է, որ Յ-ին սպանել են մոտ տարածությունից և շարունակել են ծեծել նրանց:

Սկզբից դիմումատունին ծեծել են բռունցքներով և աքացիներով: Այնուհետև ոստիկանության ծառայողները սկսել են խփել նրան ռետինե մահակներով: Դիմումատուն ժամանակ առ ժամանակ ուշակորույս է եղել, սակայն նրան սթափեցրել են և շարունակել

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական բարձանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

ծեծը: Որոշ ժամանակ անց ոստիկանները սկսել են ունելիով սեղմել դիմումատուի եղունգները: Խոշտանգումների նույն մեթոդներն են կիրառվել նաև զինծառայողներ S-ի և Ա-ի հանդեպ:

Երկու օր անց, ծառայող S-ն խոստովանել է քննչին, որ իր աչքով է տեսել, թե ինչպես է դիմումատուն վերցրել իր ինքնաձիգը և կրակել Դ-ի վրա: Քանի որ զինծառայող Ա-ն հերթապահել է S-ի հետ միասին, նրան նույնպես ստիպել են ցուցմունք տալ, որի համաձայն S-ն նրան ասել է, որ ականատես է եղել սպանությանը:

Դրանից հետո ոստիկանության ծառայողները շարունակել են խոշտանգել դիմումատուին՝ ստիպելով նրան խոստովանել սպանությունը: Ըստ դիմումատուի՝ սա տեսել է մեկ ամսից ավելի: Այդ ընթացքում նա չի կարողացել կարգին քայլել և խոսել և իր եղունգներն ուռել են:

1999 թ. ապրիլի 16-ին դիմումատուին հարցաքննության է ենթարկել քննիչը, և այդ հարցաքննության ժամանակ նա խոստովանել է, որ պատահաբար կրակել է Դ-ի վրա: 1999 թ. ապրիլի 17-ին դիմումատուին տարել են դեպքի վայր, որտեղ նա տվել է այդ նույն ցուցմունքը տեսախցիկի առջև, և կատարվել է համապատասխան ձայնագրությունը:

Ըստ դիմումատուի՝ այն բանից հետո, ինչ զինծառայողներ S-ն և Ա-ն ազատ են արձակվել Ոստիկանության կողմից, նրանք գրավոր տեղեկացրել են ԴԴ զինվորական դատախազին, որ իրենց ստիպել են զրպարտել դիմումատուին:

1999 թ. հունիսի 19-ին դիմումատուն և զինծառայողներ S-ն և Ա-ն ենթարկվել են բժշկական քննության, որի ընթացքում նրանց մատներին և Ա-ի գլխին հայտնաբերվել են տարբեր վնասվածքներ:

3. Դիմումատուի նկատմամբ իրականացված քրեական դատավարությունը և նրա դատապարտումն առաջին ատյանի դատարանի կողմից

Կոնկրետ չմատնանշված օրը դիմումատուի դեմ քրեական գործ է հարուցվում:

Պարզվում է, որ 1999 թ. օգոստոսի 11-ին դիմումատուի և զինծառայող S-ի միջև վիճաբանություն է տեղի ունենում, որի ընթացքում վերջինս վերահաստատում է դիմումատուի դեմ իր նախնական ցուցմունքը:

Կոնկրետ չմատնանշված օրը գործն ուղարկվում է դատարան: 1999 թ. հոկտեմբերի 26-ին տեղի է ունենում դատական նիստ, որի ընթացքում զինծառայող S-ն, ըստ երևույթին, վկայի կարգավիճակով նույնաբովանդակ բանավոր ցուցմունքներ է տալիս:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

1999 թ. դեկտեմբերի 6-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչում կանխամտածված սպանության մեջ և դատապարտում 13 տարի ազատազրկման:

2000 թ. հունիսի 15-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը բեկանում է այս վճիռը և գործը վերադարձնում՝ լրացուցիչ քննության:

2000 թ. սեպտեմբերի 12-ին լրացուցիչ քննությունից հետո գործը ներկայացվում է դատարան:

2001 թ. հունիսի 13-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը որոշում է վերադարձնել գործը՝ լրացուցիչ քննության:

2001 թ. օգոստոսի 3-ին, դատախազի դիմումի համաձայն, վճռաբեկ դատարանը բեկանել է այս որոշումը և գործը վերադարձրել մարզի առաջին ատյանի դատարան՝ ըստ էության այն քննելու համար:

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում, դատավարության ընթացքում, դիմումատուի դատապաշտպանը պահանջել է, որ դիմումատուի՝ 1999 թ. ապրիլի 16-17-ի խոստովանությունը և վկաներ Տ-ի և Ա-ի առաջին ցուցմունքները անընդունելի համարվեն, քանի որ դրանք ձեռք են բերվել խոշտանգումների արդյունքում: Պարզվում է, որ այդ ժամանակ ոստիկանության համապատասխան ծառայողների դեմ, դիմումատուի և զինծառայողներ Տ-ի և Ա-ի խոշտանգումների կապակցությամբ, արդեն իսկ քրեական գործ էր հարուցվել:

2002 թ. հունիսի 19-ին մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչում կանխամտածված սպանության մեջ և դատապարտում նրան 10 տարի ազատազրկման: Մարզային դատարանը նշում է. «1999 թ. ապրիլի 16-ին և 17-ին դիմումատուն խոստովանել է, որ պատահաբար սպանել է զինծառայող Հ-ին: Այնուհետև նա փոխել է իր ինքնախոստովանությունը՝ որպես բռնության և խոշտանգումների ներքո տրված ցուցմունք և հայտարարել, որ ինքը տեղյակ չի եղել Հ-ի սպանության հանգամանքներին: Այդուհանդերձ, այս պնդումը հակասում է գործով ձեռք բերված այլ ապացույցներին»:

Որպես այդպիսի ապացույց՝ դատարանն առաջին հերթին վկայակոչել է «վկա Տ-ի կողմից քննչին տրված առաջին ցուցմունքը, որի համաձայն նա ծածուկ կերպով հետևել է դիմումատուին և դարձել սպանության ակնատեսը»: Վկա Տ-ն նմանատիպ հայտարարություններ էր արել նաև դիմումատուի հետ ունեցած վիճաբանության ժամանակ և 1999 թ. հոկտեմբերի 26-ի դատական նիստի ընթացքում: Ավելի ուշ և խնդրո առարկա դատավարության ընթացքում վկա Տ-ն ժխտել էր այդ ցուցմունքները՝ որպես բռնության ներքո արված հայտարարություններ, և հայտարարել, որ ինքը

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

տեղյակ չի եղել զինծառայող Յ-ի սպանության հանգամանքներին: Նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել նաև վկա Ա-ն»:

Դատարանը շարունակեց մեջ բերել վկաների բանավոր արված հայտարարությունները և փորձաքննական եզրակացությունը, որի համաձայն կրակոցն արվել էր մոտ տարածությունից և եզրակացրել.

«Գնահատելով վկաներ Տ-ի և Ա-ի կողմից նախնական քննության և դատաքննության ժամանակ արված հակասական ցուցմունքներին՝ դատարանը եզրակացնում է, որ իրականում բռնությունը գործադրվել է [ոստիկանության ծառայողների կողմից] ... ճշմարտությունը բացահայտելու նպատակով»:

Դատարանը եզրակացրեց, որ «վկա Տ-ի կողմից արված նոր հայտարարությունները կեղծ են և նպատակ են հետապնդել օգնելու դիմումատուին՝ խուսափելու քրեական պատասխանատվությունից: Այն փաստը, որ վկա Տ.-ն տեղյակ էր ծառայող Յ.-ի սպանության հանգամանքներին, հաստատված է այն անկաշկանդ ցուցմունքներով, որ վերջինս տվել է 1999 թ. հոկտեմբերի 26-ի դատավարության ժամանակ՝ առանց որևէ բռնության և սպառնալիքի ենթարկվելու, ինչպես նաև այն պատմություններով, որ նա զորացրվելուց հետո պատմել է իր երկու համագյուղացիներին»:

Դատարանն ի վերջո վկայակոչում է դիմումատուի մեղքը հաստատող այլ փաստեր, ինչպիսիք են 1) զոհի հյուսվածքների նմուշի փորձագիտական ուսումնասիրությունը և վերջինիս դիակի բժշկական զննումը, որի համաձայն վերջինս մահացել է կարճ տարածությունից արված կրակոցից 2) դատաձգաբանական փորձագիտությունը, որի համաձայն հանցանքի վայրում գտնված պարկուճն արձակվել է AK-74 տիպի թիվ 916236 ավտոմատից, որը ամրացված է եղել դիմումատուին, 3) 1999 թ. ապրիլի 17-ին կազմված դեպքի վայրի զննության արձանագրությունը, ինչպես նաև մի շարք այլ նյութեր:

4. Զինվորական ոստիկանության ծառայողների դատապարտումը

2002 թ. հոկտեմբերի 9-ին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը զինվորական ոստիկաններ Մ-ին և Երեք այլ ոստիկանների մեղավոր ճանաչեց իշխանության չարաշահման մեջ և դատապարտեց նրանց երեքից երեք ու կես տարի ազատազրկման: Դատարանը եզրակացրեց.

«1999 թ. մարտի 4-ին (ոստիկանության ծառայող Մ-ն) (զինծառայող Յ-ի) ... սպանության հետ կապված (զինծառայողներ Ա-ին և Տ-ին) և այլոց բերման է ենթարկում ոստիկանություն: 1999 թ. մարտի 5-ին (դիմումատուին նույնպես բերման են ենթարկում ոստիկանություն): Այնտեղ ոստիկանության ծառայողները նրանց մի քանի օրերի ընթացքում ծեծի են ենթարկում, անթիվ-անհամար հարվածներ հասցնում [դիմումատուին] և մյուսներին ռետինե մահակով, ունելիով սեղմում նրանց եղունգները՝ պատճառելով տարբեր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

աստիճանի վնասվածքներ: Այնուհետև, [ոստիկանության ծառայողները] ստիպում են նրանց հանել կոշիկները, ձեռքերը պահել գլխների հետևում և ծնկի գալ, որից հետո սկսում են մահակի հարվածներ տեղալ նրանց ոտնաթաթերին: Խոշտանգումները շարունակելու սպառնալիքի ներքո [ոստիկանության ծառայողները] ստիպում են [դիմումատուին] խոստովանել, որ նա է սպանել [զինծառայող Գ-ին], [զինծառայող Տ-ին]՝ ցուցմունք տալ, որ նա եղել է այդ սպանության ականատեսը, իսկ [զինծառայող Ա-ին], որ նա տեղյակ է եղել սպանության մասին: [Ոստիկանության ծառայողները] նաև սպառնում են իրենց զոհերին վրեժխնդիր լինել նրանցից, եթե վերջիններս այդ ամենի մասին հայտնեն վերադաս ատյանների...

2000 թ. հունվարի 5-ին [ոստիկանության ծառայող Մ-ն] Երևանի զինվորական ոստիկանության վարչության իր գրասենյակում ստիպում է [զինծառայող Ա-ին] բռնության հետ կապված հայտարարել, որ ինքը չի ճանաչել [ոստիկանության ծառայող Մ-ին], որ իրեն ոչ ոք չի ծեծել, իսկ մատների վնասվածքները այն բանի հետևանք են, որ նա իր ձեռքը թողել է մեքենայի դռան տակ ...

Հիշյալ վճիռը հիմնված էր վկաների մի շարք ցուցմունքների վրա՝ ներառյալ նաև տուժողներինը և բժշկական փորձաքննության արդյունքները:

Իր ցուցմունքում դիմումատուն, *inter alia*, նշել է, որ իրեն մինչև 1999 թ. մարտի վերջը պահել են զինվորական ոստիկանությունում, որտեղ նրան կանոնավոր կերպով ծեծի են ենթարկել: 1999 թ. մարտի վերջին նրան տեղափոխել են զինվորական դատախազություն, իսկ այնուհետև, 1999 թ. ապրիլի 10-ին, դարձյալ տարել ոստիկանություն: Ետդարձի ճանապարհին ոստիկանության ծառայող Մ-ն սպառնացել է նրան, եթե նա հրաժարվի խոստովանելուց: Այդ նույն օրը ոստիկանության մեկ այլ ծառայող նույնպես սպառնացել է նրան, սակայն խոստացել հանցագործությունը որակել անզգուշությամբ կատարված, եթե դիմումատուն համաձայնի խոստովանել, որից հետո վերջինս արել է իր գրավոր խոստովանությունը:

Վկայի՝ իր ցուցմունքում զինծառայող Ա-ն, *inter alia*, նշել է, որ քննչին ցուցմունք տալուց հետո իրեն և զինծառայող Տ-ին մոտ մեկ ամիս պահել են ոստիկանության ճաշարանում: Ապրիլի սկզբին ոստիկանության ծառայող Մ-ն իր մոտ է կանչել իրեն և զինծառայող Տ-ին և պահաջել, որ քննչի հարցաքննության ժամանակ նրանք ասեն, որ ոստիկանությունում նրանց ծեծի չեն ենթարկել և նրանց հանդեպ բռնություն ցույց չի տրվել և որ նրանց մատների վնասվածքներն առաջացել են մեքենայի դռան տակ թողնելու պատճառով: 2000 թ. հունվարի 5-ին ոստիկանության ծառայող Մ-ն սպառնացել է սպանել նրան, եթե նա քննչին հայտնի բռնության մասին:

Վկայի՝ իր ցուցմունքում զինծառայող Տ-ն, *inter alia*, նշել է, որ 1999 թ. նոյեմբերի 30-ին, ոստիկանության սպա Մ-ի գործադրած ճնշման տակ նա հայտնել է քննչին, որ որևէ մեկն իրեն ծեծի չի ենթարկել:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

Կոնկրետ չմատնանշված օրը դիմումատուի փաստաբանը բողոքարկում է այս վճիռը:

2002 թ. նոյեմբերի 14-ին ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարանը չընդունեց բողոքը, քանի որ, համաձայն ներպետական օրենսդրության, քրեական գործերով տուժողն իրավունք ունի դատավճիռը բողոքարկելու միայն այն դեպքում, եթե վարույթը հարուցված է եղել իր բողոքի հիման վրա:

2002 թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը, որպես վերջին ատյան, առանց փոփոխման թողեց այս դատավճիռը:

5. Դիմումատուի գործի վարույթները վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում

Կոնկրետ չմատնանշված օրը դիմումատուն բողոքարկում է 2002 թ. հունիսի 19-ի իր մեղադրական դատավճիռը:

ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում դատաքննության ժամանակ, որի ողջ տևողության ընթացքում դիմումատուին պահում են նիստերի դահլիճում տեղադրված երկաթե վանդակում, նա հայտարարում է, որ տեղյակ չի եղել զինծառայող Հ-ի սպանության հանգամանքներին և որ նրան ստիպել են անել իր խոստովանական հայտարարությունը:

Վկա Տ-ն ցուցմունք տվեց այն մասին, որ չի տեսել, թե ով է սպանել զինծառայող Հ-ին, քանի որ ինքը և վկա Ա-ն խնդրո առարկա ժամանակահատվածում հեռու են գտնվել: Նա այնուհետև հայտնեց, որ իր նախաքննական ցուցմունքներն այն մասին, որ ինքը եղել է սպանության ակնատեսը, ճշմարիտ չէ և որ նա այդ ցուցմունքները տվել է իր նկատմամբ գործադրված բռնությունների արդյունքում: Միջադեպից անմիջապես հետո բոլոր հինգ զինծառայողներն էլ պայմանավորվել են ասել, որ զինծառայող Հ-ն սպանվել է ադրբեջանցի նշանառուի կողմից, սակայն իրականում նա ոչինչ չգիտեր Հ-ի սպանության մասին: Վկա Ա-ն նույնաբովանդակ ցուցմունքներ է տվել:

2003 թ. ապրիլի 1-ին վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողնում դիմումատուի մեղադրական դատավճիռը: Դատարանը եզրակացրեց, որ վերը նշված ցուցմունքները տրվել են դիմումատուի և վկաների միջև ձեռք բերված համաձայնության արդյունքում և նպատակ ունեն դիմումատուին գերծ պահել քրեական պատասխանատվությունից: Այդ ցուցմունքները հերքվել են գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

(ա) 1999 թ. ապրիլի 16-ին քննչի մոտ տված՝ դիմումատուի խոստովանությունը: Ավելի ուշ, դատարանում, դիմումատուն հրաժարվել է այդ ցուցմունքներից հայտնելով որ դրանք բռնությունների ազդեցության տակ է տվել, սակայն չի

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

մանրամասնել, թե քննիչի մոտ բռնություններն ինչ եղանակով են կատարվել,

(բ) 1999 թ. հոկտեմբերի 26-ի դատական նիստի ընթացքում վկաներ Տ-ի և Ա-ի տված ցուցմունքներ այն մասին, որ նրանցից մեկն ականատես է եղել սպանությանը, իսկ մյուսը՝ տեղյակ է եղել դրա մասին: Հետագայում հրաժարվելով իրենց այս ցուցմունքներից, վկաներ Տ-ն և Ա-ն հայտնել են որ դատաքննության ընթացքում իրենց նկատմամբ որևէ բռնություն չի եղել, այլ իրենք ցուցմունքներ են տվել կամովին, սակայն դրանք ևս ճիշտ չեն:

(գ) Վկաների այլ ցուցմունքներ, համապատասխան փորձագնության եզրակացություններ, տարբեր փաստաթղթեր և տեսաձայնագրություն:

Վերաքննիչ դատարանը չի բավարարում դիմումատուի փաստաբանի՝ դիմումատուի կողմից վկա կանչելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը: Բացի դրանից դատարանը որպես ապացույց չի ընդունում դիմումատուի կողմից ներկայացված մասնագետի կողմից կազմված ակտը, որը կազմվել է Ռուսաստանի դատական փորձագիտական կենտրոնի կողմից: Դատարանը գտավ, որ մեկ այլ պետության մասնագետի կողմից կազմված ակտը ներկայացվել է ներպետական համապատասխան իրավական նորմերի խախտմամբ, ներպետական դատավարական նորմերի համաձայն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Դատարանը հանգում է այն հետևության, որ գինվորական ոստիկանությունում բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները, որոնք հաստատվել են գործի փաստացի հանգամանքներով, մեղադրանքի հիմքում չեն դրվել և որպես ապացույց չեն օգտագործվել:

2003 թ. ապրիլի 14-ին դիմումատուի դատապաշտպանը վճռաբեկ բողոք է բերում: Իր վճռաբեկ բողոքում, նա, *inter alia*, ասում է, որ դիմումատուի 1999 թ. ապրիլի 16-ի խոստովանական ցուցմունքը, ինչպես նաև հաջորդ օրը դեպքի վայրում կազմված փաստաթուղթը և կատարված տեսաձայնագրությունը իրականացվել են ծեծի, բռնության և սպառնալիքների ազդեցության ներքո և, հետևաբար, չեն կարող, դրվել մեղադրանքի հիմքում և օգտագործվել որպես ապացույցներ: Բացի դրանից, վերաքննիչ դատարանը չպետք է հիմնվեր դատավարության ամենավաղ փուլում՝ ներառյալ նաև 1999 թ. հոկտեմբերի 26-ի դատավարությունը, վկա Տ-ի կողմից տրված ցուցմունքների վրա՝ հիմնավորելու դիմումատուի առաջին ինքնամեղադրական ցուցմունքը, որն արվել էր խոշտանգումների ներքո: Այս ցուցմունքները արդյունք էին վախի, որը զգացել էր վկա Տ-ն իր հանդեպ կիրառված աննախադեպ բռնության հետևանքով: Նա, մի քանի առիթներով կալանքի ենթարկվելով, մշտապես ճնշումների է ենթարկվել քննիչների կողմից, իսկ վերոհիշյալ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

դատաքննության ժամանակ դեռ զորացրված չի եղել և վախեցել է, որ իրեն կրկին կկալանավորեն և կենթարկեն բռնության: Որպես օրինակ այն բանի, որ վկա Տ-ն վախեցել է ասել ճշմարտությունը՝ դատապաշտպանը վկայակոչել է 1999 թ. նոյեմբերի 30-ի նրա ցուցմունքը, որում վկան հայտնել է, որ իր մատների վնասվածքները մեքենայի դռան տակ թողնելու հետևանք են: Այնուամենայնիվ, իր նախնական ցուցմունքները ժխտելուց հետո ընկած վերջին երեք տարիների ընթացքում վկա Տ-ն պնդում է, որ տեղյակ չի եղել զինծառայող Յ-ի սպանության հանգամանքներին: Եվ վերջապես դատապաշտպանը վիճարկում է, որ ի հակառակ այն ամենի, ինչ նշված է եղել վերաքննիչ դատարանի վճռում՝ վկա Ա-ն երբևէ գործի դատաքննության ընթացքում որևէ դիմումատուի մեղքն ապացուցող որևէ ցուցմունք չի տվել: Հակառակը՝ նա մշտապես պնդել է, որ վկա Տ-ն չէր կարող սպանության ականատեսը լինել, քանի որ նրանք խնդրո առարկա ժամանակահատվածում մշտապես միասին են եղել:

2003 թ. մայիսի 8-ին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատը առանց բավարարման է թողել փաստաբանի վճռաբեկ բողոքը և դատավճիռը թողել է անփոփոխ:

Դատարանն, *inter alia*, գտավ, որ.

«Դատավճռի հետևությունները հիմնավորված են դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների, մասնավորապես՝ [վկաներ Տ-ի, Ա-ի և այլոց ցուցմունքների, ինչպես նաև տարբեր փորձաքննական եզրակացություններով] հիման վրա:

... հիմնավորված է, որ դեպքից հետո [զինծառայող Տ-ն և Ա-ն, դիմումատուն և այլոք] պայմանավորվել են ... ասելու, որ իբր [զինծառայող Յ-ն] սպանվել է [ադրբեջանցիների] կողմից, սակայն [զինծառայող Տ-ն] 1999 թ. հոկտեմբերի 26-ին առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել այն մասին, որ [զինծառայող Յ-ին] սպանել է ... [դիմումատուն]:

[Դիմումատուի] դատապաշտպանի պատճառաբանություններն այն մասին, որ դատավճռի հիմքում դրվել են [վկաներ Տ-ի և Ա-ին] խոշտանգելու եղանակով ձեռք բերված ցուցմունքները անհիմն են, չեն բխում գործի նյութերից և հերքված են գործում եղած հետևյալ ապացույցներով.

[Դիմումատուին և վկաներ Տ-ին և Ա-ին մի քանի օր ծեծել են ոստիկանության աշխատակիցները], պահանջելով ճիշտ ցուցմունք ցուցմունք տալ [զինծառայող Յ-ի] սպանության գործով: Ոստիկանության աշխատակիցները նրանցից որևէ ցուցմունք չեն վերցրել: Ցուցմունքները վերցրել է զինվորական դատախազության գործը քննող քննիչը, որի կողմից նրանց նկատմամբ բռնություն չի գործադրվել ...

[Ոստիկանության համապատասխան աշխատակիցները դատապարտվել են]: Գործը քննած քննիչներից և ոչ մեկի դեմ քրեական գործ չի հարուցվել:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

... 1999 թ. օգոստոսի 11-ին [դիմումատուի և զինծառայող Տ-ի միջև դիմումատուի դատապաշտպանի ներկայությամբ], կատարվել է առերես հարցաքննություն, որի ընթացքում [զինծառայող Տ-ն] պնդել է, որ [զինծառայող Յ-ին] ինքնաձիգով սպանել է [դիմումատուին]: Հաստատված է որ այդ ժամանակ նրա նկատմամբ որևէ բռնություն չի գործադրվել:

Հետագայում [զինծառայող Տ-ն] հրաժարվել է վերը նշված ցուցմունքներից և հայտնել, որ ինքը չի տեսել, թե ով է սպանել [զինծառայող Յ-ին]՝ չժխտելով, որ նախկինում նա մի քանի անգամ պատմել է, որ [զինծառայող Յ-ին] սպանել է դիմումատուն: Վերաքննիչ դատարանը իրավացիորեն արժանահավատ է համարել [Տ-ի] խոստովանական ցուցմունքները և դրանք համարել [դիմումատուի] մեղքն ապացուցող ցուցմունքներ:

[Դիմումատուն] նախաքննության ժամանակ զինվորական դատախազության քննչի մոտ ցուցմունք է տվել այն մասին, որ ինքն է սպանել [զինծառայող Յ-ին], սակայն անզգուշությամբ:

Այսպիսով՝ գործով ձեռք բերված ապացույցները՝ անկախ այն փաստից, որ նախաքննության ընթացքում զինվորական ոստիկանության աշխատակիցների կողմից [դիմումատուի և վկաներ Տ-ի և Ա-ի հանդեպ], թույլ են տրվել բռնություններ, զնահատության ենթարկելով վերաբերելիության և թույլատրելիության առումով, իրենց համակցության մեջ բավարար են մեղսագրված հանցագործության մեջ [դիմումատուին] մեղավոր ճանաչելու համար»:

2003 թ. դեկտեմբերի 22-ին դիմումատուն պատժի մնացած մասը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է:

Բ. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է, որ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, իչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով:

Օրենսգրքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք պարտավոր չէ վկայել իր դեմ:

Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ այն նյութերը, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով, չեն կարող դրվել մեղադրանքի

հիմքում և օգտագործվել որպես ապացույց քրեական գործով վարույթում:

ԲՈՂՈՔՆԵՐԸ

1. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ դիմումատուն բողոքում է, որ.

(ա) բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործումը դատարանում խախտում է հիշյալ հոդվածը և

(բ) որ նրան ենթարկել են իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում և ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարանում նիստերի ժամանակ պահելով երկաթե վանդակի մեջ:

2. Դիմումատուն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իր դեմ իրականացված քրեական վարույթի առնչությամբ բողոքում է, որ

(ա) ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի նախագահն անաչառ չի եղել, քանի որ նրա որդին աշխատում է որպես դատախազության քննիչ,

(բ) խախտվել է նրա՝ իր դեմ չվկայելու իրավունքը, իսկ բռնությունների արդյունքում իր տված խոստովանական ցուցմունքը որպես ապացույց օգտագործվել է դատարանում,

(գ) խախտվել է կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է որպես ապացույց դիտել մասնագետի կարծիքը, մինչդեռ ընդունել է նախաքննության մարմնի կողմից պատվիրված փորձաքննական եզրակացությունը,

(դ) դատաքննությունն արդարացի չի եղել, քանի որ վկաներ Տ-ի և Ա-ի դատաքննության ավելի ուշ փուլում տրված ցուցմունքները, որոնք դիմումատուի օգտին են եղել, աղավաղվել են վերաքննիչ դատարանի կողմից և օգտագործվել դիմումատուի դեմ:

(ե) դատաքննությունն արդարացի չի եղել, քանի որ դատարանի դատավճիռները պատճառաբանված չեն եղել և հաշվի չեն առել իր և իր դատապաշտպանի կողմից ներկայացված մի շարք փաստարկներն ու ապացույցները:

(զ) դատաքննությունն արդարացի չի եղել, քանի որ բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները, այն է՝ վկաներ Տ-ի և Ա-ի հայտարարությունները, հիմք են հանդիսացել դատարանների համար և օգտագործվել դիմումատուի դեմ, և

(է) խախտվել է կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ իրեն պահել են երկաթե վանդակում, ինչը ստիպել է իրեն զգալ և

լինել կողմ, որը հակառակ կողմի համեմատությամբ չունի հավասար իրավունքներ:

3. 6-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա՝ դիմումատուն բողոքում է, որ խախտվել է իր աննեղության կանխավարկածը, քանի որ նրան պահել են վանդակում, ինչի պատճառով նա հանցագործի է նմանվել:

4. 6-րդ հոդվածի 3-րդ կետի d) ենթակետի հիման վրա՝ դիմումատուն բողոքում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը կամայականորեն մերժել է դիմումատուի անունից վկա կանչելու վերաբերյալ միջնորդությունը, մինչդեռ կանչել է երկու այդպիսի վկա մեղադրող կողմի միջնորդությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐՑԵՐ

1. Դիմումատուն բողոքում է դատարանում՝ բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործման և երկաթե վանդակում պահվելու դեմ: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որի համապատասխան մասն ամրագրում է.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ...»:

ա) Ինչ վերաբերում է դատարանում՝ բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործման վերաբերյալ բողոքին, Դատարանը գտնում է, որ դրա նկատմամբ ավելի շատ կիրառելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

բ) Ինչ վերաբերում է երկաթե վանդակում պահվելուն, Դատարանը հիշեցնում է, որ կարող է քննել միայն այն գործերը, որոնցով ներպետական վերջնական որոշումը կայացնելուց հետո անցել է աչ ավելին քան վեց ամիս: Եթե դիմումատուի բողոքը վերաբերում է շարունակական իրավիճակի, 35-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված վեցամսյա ժամանակահատվածը սկսվում է այն պահից, երբ այդ իրավիճակն արդեն ավարտվել է (տես օրինակ՝ Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի (թիվ 1) (որոշ.), թիվ 64666/01, ՄԻԵԴ 2001-VI): Սույն գործում դիմումատուն բողոքում է այն պայմանների դեմ, որոնցում ինքը պահվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում և ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում իր գործի գտնվելու ժամանակ: Վերաքննիչ դատարանում գործի քննությունն ավարտվել է 2003 թ. ապրիլի 1-ին, որից սկսած մինչև 2003 թ. հոկտեմբերի 29-ը, երբ սույն գանգատը ներկայացվել է Դատարանին, անցել է վեց ամսից ավելի:

Այստեղից հետևում է, որ այս բողոքը ժամկետանց է և ենթակա է մերժման՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

2. Դիմումատուն բողոքում է, որ իր դատավարության ընթացքում խախտվել են արդարացի դատաքննության մի շարք երաշխիքներ: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որի համապատասխան մասը սահմանում է.

“Յուրաքանչյուր ոք ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի անկախ ու անաչառ դատարանի կողմից արդարացի ... դատաքննության իրավունք ...:

ա) Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի նախագահի անաչառության վերաբերյալ եղած կասկածներին, Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ նախագահի բարեկամն իրավապահ մարմիններում աշխատող բարեկամը, ով սակայն որևէ ակնհայտ մասնակցություն չի ունեցել սույն դատաքննությանը, չի կարող հանդես գալ որպես գործոն, որը կասկած կարող է հարուցել վերջինիս անաչառության հարցում այնքանով, որքանով խոսքը գնում է տվյալ դատավարության մասին:

Հետևաբար գանգատի այս մասը հիմնավորված չէ և երթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

բ) Ինչ վերաբերում է բռնության գործադրման և հետագայում դատարանում դիմումատուի խոստովանական ցուցմունքի օգտագործման մասին բողոքին, Դատարանը գտնում է, որ եղած նյութերի հիման վրա չի կարող որոշել գանգատի այս մասի ընդունելիության հարցը և որ հետևաբար, Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 2-րդ (բ) պարբերության համաձայն, անհրաժեշտ է բողոքի մասին ծանուցում ուղարկել պատասխանող Կառավարությանը:

գ) Ինչ վերաբերում է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ մասնագետի կարծիքը որպես ապացույց ընդունելու մերժմանը, Դատարանը հիշեցնում է, որ ապացույցների ընդունելիությունը հիմնականում ներպետական օրենսդրության կարգավորման խնդիր է և, որպես կանոն, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնված իրենց ներկայացված ապացույցների գնահատումը (տե՛ս օրինակ. Ֆերանտելլին և Սանտանջելոն ընդդեմ Իտալիայի (*Ferrantelli and Santangelo v. Italy*) գործով 1996 թ. օգոստոսի 7-ի վճիռը, Ջեկույցներ վճիռների և որոշումների վերաբերյալ 1996-III, կետ 48): Սույն գործով վերաքննիչ դատարանը քննության է առել դիմումատուի՝ մասնագետի կարծիքը որպես ապացույց ընդունելու մասին միջնորդությունը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ հիշյալ կարծիքն իրեն է ներկայացվել ի խախտումն համապատասխան ներպետական օրենսդրության և, այսպիսով, չի կարող ընդունվել որպես ապացույց: Դատարանը նշում է, որ իրեն ներկայացված նյութերում չկա մի հիմք, որ թույլ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

կտար իրեն չհամաձայնել վերքաննիչ դատարանի եզրակացության հետ:

Չետևաբար գանգատի այս մասը հիմնավորված չէ և երթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

դ) Ինչ վերաբերում է վկաների ցուցմունքների աղավաղման հարցին, ինչպես արդեն նշվել է, որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնված իրենց ներկայացված ապացույցների գնահատումը: Դատարանը նշում է, որ դիմումատուն չի ներկայացրել որևէ ապացույցներ, որոնք ցույց կտային, որ ՉՉ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը գերազանցել է հիշյալ վկաների ցուցմունքները գնահատելու՝ ներպետական դատարանների հայեցողության սահմանը:

Չետևաբար գանգատի այս մասը հիմնավորված չէ և երթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

ե) Ինչ վերաբերում է դատարանների դատավճիռներում հիմնավորումների բացակայության բողոքին, Դատարանը հիշեցնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանները պարտավոր են տալ իրենց վճիռների հիմնավորումները, սակայն չպետք է սա ընկալել այնպես, որ նրանք պարտավոր են մանրամասն պատասխան տալ յուրաքանչյուր փաստարկին (տես Չիրո Բալանին ընդդեմ Իսպանիայի, 1994 թ. դեկտեմբերի 9-ի վճիռը, Շարք A թիվ 303-B, էջեր 29-30, կետ 27): Սույն գործում բոլոր երեք ատյանների դատարաններն էլ համեմատաբար մանրամասն դատավճիռներ են կայացրել՝ իրենց եզրահանգումներում հիմնվելով տարբեր ապացույցների վրա: Գործով ներկայացված նյութերը և նման դեպքում ներպետական դատարանների հայեցողության սահմանը նկատի ունենալով Դատարանը չգտավ, որ դատարանները չեն հիմնավորել իրենց վճիռները:

Չետևաբար գանգատի այս մասը հիմնավորված չէ և երթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

զ) Ինչ վերաբերում է դատարանում բռնությունների արդյունքում վկաների տված ցուցմունքների օգտագործմանը, Դատարանը գտնում է, որ չի կարող եղած նյութերի հիման վրա որոշել գանգատի այս մասի ընդունելիությունը և որ, հետևաբար, անհրաժեշտ է, դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 2-րդ (բ) պարբերության հիման վրա, բողոքի մասին ծանուցում հղել պատասխանող կառավարությանը:

է) Ինչ վերաբերում է կողմերի հավասարության սկզբունքի խախտման մասին բողոքին, Դատարանը հիշեցնում է, որ կարող է

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

քննության առնել միայն այն բողոքները, որոնց առնչությամբ սպառվել են բոլոր ներպետական իրավական միջոցները (տես օրինակ՝ Վալասինասն ընդդեմ Լիտվայի (որոշ.), թիվ 44558/98, 14-ը մարտի 2000 թ.): Սույն գործով դիմումատուն 2003 թ. ապրիլի 14-ին վճռաբեկ դատարան ներկայացված իր վճռաբեկ բողոքում չի բարձրացրել այս հարցը:

Չետևաբար դիմումատուն չի սպառել բոլոր ներպետական իրավական միջոցները և գանգատի այս մասը զուրկ է հիմնավորումից և ենթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

3. Դիմումատուն բողոքում է անմեղության կանխավարկածի խախտման դեմ: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, որն ամրագրում է, որ.

«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքին համապատասխան:»

Դատարանը նշում է, որ այս բողոքը նմանապես չի բարձրացրել իր վճռաբեկ բողոքում:

Չետևաբար դիմումատուն չի սպառել բոլոր ներպետական իրավական միջոցները և գանգատի այս մասը զուրկ է հիմնավորումից և ենթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

4. Դիմումատուն բողոքում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է իր կողմից վկա հրավիրելու միջնորդությունը: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (d) ենթակետը, որի համապատասխան մասը սահմանում է, որ.

«Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք [իրավունք] ունի ... իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները ...»

Դատարանը հիշեցնում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (d) ենթակետի համաձայն՝ որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնում այն հարցի գնահատումը, թե արդյոք անհրաժեշտ է հրավիրել վկաների, թե ոչ և չի պահանջում ամբաստանյալի կողմից հանդես եկող յուրաքանչյուր վկայի հրավիրումը և քննությունը (տես օրինակ՝ Վիդալն ընդդեմ Բելգիայի, 1992 թ. ապրիլի 22-ի վճիռը, Շարք Ա թիվ 235-B, կետ 33): Դատարանը նշում է, որ դիմումատուն ապացույցներ չի ներկայացնել ի պաշտպանություն իր այն բողոքի, որ վերաքննիչ դատարանը կամայականորեն մերժել է իր կողմից վկաներ հրավիրելու իր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

միջնորդությունը, ինչպիսիք են, օրինակ, նման միջնորդության և դրա մերժման պատճենները: Գործի նյութերում չկա այս բողոքն ապացուցող որևէ այլ փաստ:

Չետևաբար գանգատի այս մասը հիմնավորված չէ և երթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

Վերը նշված պատճառներից ելնելով՝ Դատարանը միաձայն

Որոշում է հետաձգել դիմումատուի՝ լռության իրավունքի խախտման և դատարանում խոշտանգումների ներքո ձեռք բերված ապացույցների օգտագործման վերաբերյալ ներկայացված բողոքների քննությունը,

Չայտարարում է գանգատի մնացած մասն անընդունելի:

Վինսենթ Բերժե
Քարտուղար

Բոստյան Մ. Ջուպանչիչ
Նախագահ